Զ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 5 ՓԵՏՐՎԱՐ 1903 — Թիւ 490

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

Վաճառքի համար ձեռք 10 սանթիմ

Նամակ և դրամ դրկել խմբագրութեան հասցեին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռք
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռք
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Դրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՊԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՆԻՐՀՍ

—o—

Դաշտը եղայ զարնան քաղցր պտոյտին
Կանա՞չ դաշտը, որ բոյր, ծաղիկ հր ամբողջ
Նուրբ կոկոններ, նո՛ր տերեւներ, ծիլ բողբոջ
Կը ժպտին հովի սիրուն արտոյտին։

Կանանչ-կարմի՛ր, կապոյտ-ճերմա՛կ գունագեղ
Գորգ մը կար գոգ փռուած ղայնիոյ վեհ դաշտին
Զեռն ի ծընիս մըրտիցի հոն հեշտին
Քնիոուշ ծաղկանց յոյր-անկողնին մէջ շըրի՛ղ։

Վառ երկինքին յոյս, սէր, հաւատ կը տեղար
Եւ արեւուն ճառագայթներուն հետը յար
Նուագի՛ն բոլնիկ, մեղու ներդաշնակ։

Անհուն սիրոյ բարմ կեանք մը՝ ի՛ր որ յեղեր
Մայր բընութի՛ւն զո՛յս-արգանդին կը վրքեր
Ազատութի՛ւն մը կը պակսեր ինձ միմիակ։

Վ Է Տ Ա

ԹՈՒՐՔԻԱՆ ՕՊԱՌՈՒՄ Է

Աւստրիական և ռուս կառավարութիւնները դեռ իրենց, Մակեդոնիան բարենորոգելու համար, կազմած ծրագիրը չեն ներկայացրել Թուրք կառավարութեան։ Մի քանի եւրոպական թերթեր նոյն իսկ հաղորդում են որ ռուս և աւստրիական կառավարութիւնների միջեւ դեռ լիովին համաձայնութիւն չէ կայացած այդ մասին, և եթէ համաձայնութիւն էլ կայանայ, ծրագիրը շատ սահմանափակ պէտք է լինի, և բոլորովին բաւարարութիւն չը պէտք է տայ Մակեդոնացիներին։

Մինչ Մակեդոնիան ինչ որ վիժած բարենորոգումներով օժտել ուզող կառավարութիւնները դանդաղում են, առանց հոգսը ունենալու Մակեդոնիայում տանջվողների մասին, Բուլգարիայում Մակեդոնացիները եռուզեռի մէջ են և աշխատում են անպատճառ դարձանը ապստամբութիւն բարձրացնել։ Այդ եռուզեռը աննկատելի չը մնաց Թուրք կառավարութեան կողմից, և նա անցեալ օր մի խիստ նօթայով Բուլգար կառավարութեան ազդարարեց որ—եթէ այսուհետեւ Բուլգարիայից ոչ է հրոսակումբ անցնի Մակեդոնիա, ինքը իսկոյն պատերազմ պէտք է յայտարարէ Բուլգարիայի դէմ։

Եւ ահա Բուլգարիան այդ ըստ պատնալիքի հանդէպ մնաց երկու կրակի արանքում։ Մի կողմից եղբայրակից ժողովուրդը իրենից մի քանի քայլ հեռու են. Թարկված է Թրքական գաղանութիւններին, նոյն երկրի բազմաթիւ զաւակները, որոնք գտնվում են Բուլգարիայում սարսափելի յուզված են և ճիգեր են թափում օգնութեան հասնել իրենց եղբայրներին միւս կողմից։

Դրանց բոլորովին ազատ թողնել, կը նշանակի մեն մինակ Թուրքիայի դէմ պատերազմի դուրս գալ, որը այնքան դիւրին չէ. իսկ զսպել, խիստ միջոցներ գործ դնելով, նշանակում է իր եղբայրակիցների աչքում անտարբեր, քարասիրտի տիտղոսը ստանալ և բոլորովին վարկաբեկ լինել։

Այդ դեռ բաւական չէ Ռուսն ու Աւստրիան էլ պէտք է բարկանան փոքրիկ իշխանապետութեան դէմ, որ իրանց չը լսելով ձգտումներ է ցոյց տալիս իր պարտականութիւնը կատարել դէպի իր տանջվող եղբայրները։

Ինչպէս երեւում է Բուլգարիայի կառավարութիւնը որոշել է աւելի խոհեմ լինել, փոքրիկ իշխանութիւնը մեծ վտանգների ենթարկելու վախից, քան թէ իր եղբայրական պարտականութեան թովիչ զգացմունքին ենթարկվիլ։

Բուլգարիայի քաղաքական դրութիւնը այնքան փափուկ է, իր ուժերը հակառակող պետութիւնների հանդէպ այնքան փոքր, որ ամենաազատասէր մարդը անգամ վարանում է մեղադրել կառավարութիւնը՝ իր խոհեմութեան պատճառով։ Ինչպէս երեւում է առ այժմ Բուլգարիան չը պէտք է կարողանայ զգալի միջամտութիւն անել Մակեդոնիայի բախտը որոշելու խնդրում, և իրենք Մակեդոնացիները միայն պէտք է իրենց ճիգերը թափեն գոնէ մասամբ իրենց վիճակը բարելաւելու համար։

Բուլգար կառավարութիւնը իր խաղաղասիրական տրամադրութիւնները որոշ կերպով ցոյց տալու և զինքը խաղաղութեան վրդովող չը ներկայացնելու համար արդէն խիստ միջոցներ ձեռք առաւ Մակեդոնացի գործիչների հանդէպ։ Ներքին գործերի նախարարի հրամանով զոցված են մակեդոնական ընկերութիւնների բոլոր բիւրոները և ձերբակալված են բոլոր աչքի ընկնող գործիչները կեդրոնական կոմիտէների նախագահների հետ միասին։ Բայց հասարակական կծիքով այդ բոլորը չը պէտք է կարողանան կասեցնել մակեդոնական ապստամբութիւնը, որովհետեւ Սարաֆովիստների կարեւոր գործիչները և ինքը Սարաֆովը արդէն Մակեդոնիայում են գտնվում և դարձան համար ապստամբութեան են պատրաստվում։ Թէ ո՞րքան ճիշդ է այս կարծիքը, դա ապագան կը պարզէ։

ՎԱՐՈ

ԴԷՍԻՑ ԴԷՆԻՑ

Ազգային կեանքի կարեւոր դէպքերն են վերջին օրերուս մէջ Պոլսոյ եւ Իզմիրի դատավարութիւնները ուր Թուրք կառավարութիւնը առիթը ունեցաւ քանի մը հայ երիտասարդներ կրկին արտակարգ պատիժներու դատապարտել։

Օրմանեան Պատրիարքը գնդակուելէն վերջն անգամ պատրիարքական գահէն հրաժարելու տրամադրութիւնը չունի կարծես. եւ արդէն կարմիրին պալատը այցելեր է կըսեն Պոլսոյ թերթերը։ Բառակուսի անհրես մարդ է եղեր սա Օրմանեանը։

* *
*

Եւրոպական երեք պետութիւններ, Անգլիա, Գերմանիա եւ Իտալիա զբաղած են Ուէնէցուէլայի խնդրով։ Խնդիրը կարգադրելու համար բանակցութիւնները կը կատարեն Ուաշինկթընի մէջ։ Ուէնէցուէլայի պատուիրակը Պովէն, որ միանգամայն եւ Միացեալ նահանգներուն դեսպանն է Ուէնէցուէլայի մէջ, բաւական խստօրէն ու ճարպիկութեամբ կաշխատի Գերմանիոյ յոխորտանքը չափաւորել։ Խնդրի կարգադրումը ձգուած է Լահէի միջազգային հաշտարար դատարանին, եւ Պովէն կը պահանջէ որ միացեալ պետութիւնները նաւատանգիստներուն պաշարումը վերցնեն ու իրենց զրահաւորները քաշեն տանին։ Գերմանիոյ սիրապետական եւ պատերազմական տրամադրութիւնները մեծ յուզում յառաջ բերած են թէ Ամերիկայի եւ թէ Անգլիոյ մէջ։ Անգլիացիները իրենց կառավարութիւնը կը մեղադրեն որ համաձայներ է Գերմանիոյ արկածախնդիր կայսեր հետ եւ այդպիսի ոչ պատուաբեր գործի մը մէջ մտեր Գերմանացւոց հետ միասին, որոնց միակ նպատակն է ծովերու վրայ ուժեղնալ եւ ապագային Անգլիոյ դէմ իրը հակառակորդ մը ներկայանալ։

* *
*

Երկու մեծ պետութիւններն ալ Ռուսիա եւ Աւստրիա, որոնց հետ է եւ Ֆրանսա, բայց ոչ այնչափ բաց կերպով, զբաղած են մակեդոնական խնդիրով։ Ասոնք ալ ոչ թէ կուզեն Մակեդոնիան Թուրքիոյ ճիրաններէն ազատել, այլ կուզեն առ այժմ խաբուսիկ միջոցներով Մակեդոնացիները հանգստացնել մեծ փոթորկի մը առջեւն առնելու համար։

Լամսաւորքի, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարին, ճամբորդութենէն յետոյ ամիսներ անցան եւ դեռ այդ երկու կառավարութիւնները պաշտօնապէս ու կարուկ կերպով որոշ պատասխան մը չեն դրած Բ. Դրան առջեւ։ Մակեդոնացիք եւ Պուլկարները որոնք գոնէ փոքրիկ յոյսեր ունէին, այսօր բոլորովին յուսախաբ կերեւին։ Բոլորովին համոզուած են որ Աւստրիայէ եւ բարերար Ռուսիա-

յէ դրական բան սպասելը կատարեալ միամտութիւն է։ Այդ յուսախաբ ըլլալը գիտենք կը մղէ աւելի կատաղի ու եռանդուն ըլլալ Թուրքիոյ հանդէպ եւ անորմէ իրենց սահմանները զէնքով ու արիւնով առնել։

Ի հարկէ մեր համակրութիւնը ամբողջովին Մակեդոնացիներուն կողմն է։

Ցաւալին այն է որ մակեդոնական երկու յեղափոխական կազմակերպութիւնները, արտաքին եւ ներքին չը կրցին համաձայնութեան մը յանգիլ. ներքինները՝ Սարաֆովիստները կը պահանջեն որ Պուլկարիոյ մէջ գտնուող գործիչները իրենց նպատակ ունենան միայն նիւթապէս եւ բարոյապէս օգնել Մակեդոնիոյ մէջ գտնուող յեղափոխական մարմնոյն, ու բացէ ի բաց եւ անժամանակ հրոսախմբեր չը ղրկեն երկիր, ու ապստամբութիւնը վարելու ձգտումները թողուն։

Պուլկարիոյ մէջ գտնուող կազմակերպութեան պետերը չեն համաձայնիր այդ պահանջներուն ու կուզեն ապստամբութեան ղեկը իրենց ձեռքը ունենալ։

Վերջին դէպքերը, Թուրքիոյ նոթան, պուլկար կառավարութեան ձեռք առած միջոցները կուգան փաստելու Սարաֆովիստներուն պահանջներու արդարացի ըլլալը։

Այսպէս թէ այնպէս կատարեալ յաջողութիւն կը մաղթենք Մակեդոնացի գործիչներուն, իրենց դժուարին ու մեծ զոհաբերութիւններ պահանջող անհաւասար պայքարին մէջ։

Անձնազոհութիւնը, համբերութիւնը եւ շրջահայեցողութիւնը ամեն դժուարութիւններ կը յաղթեն։

ԿԷՏ

ՌՈՒՍԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԸ

—օ—

Ամիսներ առաջ մրցում կար ռուսական ներքին գործոց նախարար Բլեվէի և ելեւմտից նախարար Ուիթէին միջեւ։ Երկուքն ալ կարեւոր ճիւղերու նախարարներ, կաշխատէին ներքին գործերու վրայ իրենց ազդեցութիւնը գերակշռել։ Վերջապէս ինչպէս անցեալ անգամ հաղորդեցինք այդ երկու նախարարներու միջեւ համաձայնութիւն կայացած է զէմսթվոներուն գործիչներէն խորհրդատու մարմին մը կազմել ներքին գործերը կարգադրելու համար։ Ինչպէս կերեւի այդ համաձայնութիւնը կայացած է Ցարին անձնական միջամտութեանը ազդեցութեան տակ։

Մօտ օրերս ալ անհամաձայնութիւն եղեր է Ուիթէին և պատերազմական նախարար Քուրոբաթկինին միջեւ Մանչուրիոյ երկաթուղու գծին պաշտպանութեան խնդրին համար։ Ելեւմտից նախարար Ուիթէ ուզած է այդ գծին հսկողութիւնը իր վարչութեան վրայ առնել, իսկ Քուրոբաթկին պատերազմական նախարարութեան։ Այդ մասին Ցարին հետ այնքան խօսեր են, որ Ցարը նեղը մտալով հրամայած է երկու նախարարներուն որ այդ խնդրի մասին այլ եւս իրեն հետ չը խօսին։ Այնուհետեւ թէ ի՞նչ էնթրիգներ դարձեր են պալատին մէջ որոշապէս յայտնի չէ. միայն այս յայտնի է որ Մանչուրիոյ գծին հսկողութիւնը յանձնուած է զօրավար Զիխաչօֆին, ուրեմն յաղթանակը տարեր է պատերազմական նախարարը։

Ռուսիոյ մէջ, ինչպէս և ամեն երկրի մէջ կարեւոր նախարարութիւնները են պատերազմականը, ելեւմտիցը և ներքինը. ու Ռուսիոյ մէջ այդ երեք նախարարութիւնները այս վերջին տարիներուն մէջ մեծ մրցման մէջ են եւ տարբեր հոսանքներ ստեղծել կաշխատին Ցարին կառավարութեան մէջ։ Մէկ քանի տարի առաջ ելեւմտից նախարարները այն չափ ազդեցութիւն չունէին, բայց Ուիթէի այդ նախարարութեան գլուխը անցնելէն յետոյ վիճակը փոխուեցաւ։ Ուիթէ իբրեւ ճարպիկ եռանդուն, գործունեայ, ու գոնէ արտաքուստ ռուսական ելեւմտից վարկը բարձրացնող մարդ մը ըլլալով, կրցաւ Ցարին վրայ մեծ ազդեցութիւն ձեռք բերել, ու հիմա ամեն ճիգեր կը թափէ որ երկրին վարչութեան ուղղութեան մէջ մտցնելիք ամէն փոփոխութիւն առանց իր գործօն միջամտութեանը չը կատարուի։

..

Այսօր կառավարութիւնը մեծ հոգերու մէջ է բանւորական շարժումներու պատճառով։ Անցեալ աշնան վերջերը, ուրեմն երեք ամիս մը առաջ, Ռօստօֆ եւ իր շրջականները բանւորական մեծ ցոյցեր տեղի ունեցան շատ կանոնաւոր ու ակնածելի հրապարակային ժողովներով։ Առաջին անգամն է որ Ռուսիոյ մէջ միթինգ մը կազմակերպուի եւ բանւոր դասակարգը իր վարիչներուն բերանով բացարձակօրէն կը դատապարտէ Ցարին ռէժիմը եւ կը յայտարարէ որ Ռուսիոյ մէջ քաղաքացին նախ պէտք է աշխատի ազատ քաղաքացի ըլլալ։ Կառավարութիւնը այդ ցարարները ցրուելու համար չափազանց վայրենի միջոցներ ձեռք կառնէ. քօզակները կատաղօրէն յարձակելով ցուցարարներուն վրայ, կիներն անգամ կը յոշոտեն իրենց սուրերով եւ քնուտներով։

Վերջին ժամանակներս Ռօստօֆի նահանգին բանւորները ղեկավարող կոմիթէն շրջաբերական մը ուղղած է Ռուսիոյ բոլոր բանւորներուն՝ նկարագրելով Ռօստօֆի շրջանին մէջ պատահած դէպքերը եւ հետեւեալը յայտարարելով.—

Ռօստօֆի բանւորներուն այս գործադուլը եւ ցոյցերը, որուն մասնակցեցան հազարաւոր հոգիներ, անկարելի է որ այս ծայրայեղ ռէակցիոնէրական ժամանակին մէջ որոշ հետք մը չը թողուն։ Մինչ համալսարանական երիտասարդութիւնը կը վարանի եւ պատրաստ է համաձայնելու ընդունել «ինքնավարութեան» մնացորդները, իսկ ազատականները կը հրճուին երկպառակութեան համար ստեղծուած «կոմիթէներովը», ու նեցուկ կը փնտռեն փտած միապետական շինուածքին համար, սարկոքէն մտիկ ընելով Բլեվէի ժանտարմաներուն հեգնական հռհռոցները, միայն բրոլէթարիատն է որ կուրծքը բարձր բռնած է ընդհանուր խաւարին մէջ եւ միշտ վառ կը պահէ ազատութեան ջահերը։ Կառավարող դասակարգին այս վատութիւնը այս վայրկեանիս աւելի կը շեշտէ բրոլէթարիատին յեղափոխական եւ ընկերա-յառաջդիմական դերը։

Մ.

ՅՈՒՆԱՍՏԱՆ, ԿՐԵՏԷ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԻԱ

Եւրոպայի մէջ կը կարծուի որ Յունաստանը տրամադիր է այս ամառ Կրէտէն իրեն միացնել, չորս հովանաւորող պետութիւններու համաձայնութեամբ, և Սուլթանը այդ պարագային միայն պլատոնական բողոքով մը պիտի բաւականանայ։ Սակայն յոյն ժողովուրդը այս լուրը առանց ոգեւորուելու ընդունած է, որովհետեւ համոզուած է թէ այդ պարագային Յունաստանը Մակեդոնիոյ մէջ պիտի զիջանի պուլկար և սերպ տարրերուն, ինչպէս որ կը պահանջէ Ռուսիա։

Յոյն թերթերու գրածներուն նայելով յոյն ժողովուրդ առ այժմ պիտի հրաժարի Կրէտէն միացնելու տրամադրութենէն, որովհետեւ այդ կղզին երբ ալ ըլլայ պիտի Յունաստանին միացուի, և պիտի պաշտպանէ Մակեդոնիոյ մէջ ունեցած իր իրաւունքները։

Վերջերս լուրեր տարածուեցան որ Յունաստանի մէջ սկսած են հրոսախմբեր կազմել Մակեդոնիա ղրկելու համար, որոնց նպատակը պիտի ըլլայ ոչ թէ Թուրքերու դէմ կռուիլը այլ մակեդոնացիներուն դէմ անոնց գործունէութիւնը չէզոքացնելու համար։

Զարմանալի մարդիկ են յոյները. փոխանակ միանալու պուլկար գործիչներուն հետ և միասին աշխատելու ազատ Մակեդոնիա մը ստեղծելու համար, որուն մէջ բոլոր ցեղերը պիտի կարենան ազատ և հանգիստ ապրիլ ու անձնատուր ըլլալ յառաջդիմութեան, ընդհակառակը խոչընդոտներ կը յարուցանեն Մակեդոնիան Թուրքիոյ ճիրաններէն ազատել ձգտողներուն դէմ։ Ասով կապացուցանեն որ իսկապէս յոյն տարրը շատ փոքրաթիւ է Մակեդոնիոյ մէջ և աններելի միջոցներով կուզեն երկիր մը իրենց երկրին կցել ուր յոյն չը կայ։

..

Մեղք մը չենք գործած ըլլար եթէ այս յօդուածին մէջ Ռումանիան ալ խառնենք։

Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ Ռումէն կառավարութիւնը եւրոպական մեծ պետութիւններուն շրջաբերական մը ուղղած է որով կը յայտարարէ թէ Մակեդոնական խնդիրը կարգադրուած միջոցին, չը պիտի մոռցուին և հոն գտնուող Քուցովլախներուն շահերը։ ...

—օ—

ԱՆՊԱՏԻՒ ՄԱՐԴԻԿ

Թող ներէ ինձ պատուական Շարժումի խմբագրութիւնը, որ ես կը կամենայի Շարժումի մի անկիւնը զբաղեցնել մի երգումով, ի պատասխան «Ձայն Հայրենեաց»ի 165 թւում զետեղւած Եկեղեցեաց Գուրգէնի յօդւածին։

Այսպիսի դէպքերում գուցէ լռելը եւ արհամարհելը աւելի խոհեմութիւն կը լինէր, բայց որովհետեւ շատ անգամ մարդիկ լռութիւնը համաձայնութեան նշան են համարում, ուստի աւելորդ չէր լինել պատասխանել։

Ի՞նչ աւելի ստոր բան կայ աշխարհում, քան երբ ապերախտութիւնը եւ ի՞նչ աւելի զարհուրելի բան, քան երբ բացարձակ ստախօսութիւնը սուրբ գործին մէջ։ Այս յատկութիւնները, որ ամեն տեղ եւ ամեն ասպարիզում պախարակելի է, հրէշային եւ անանուն անամօթութեան կերպարանք են ստանում, երբ որ մամուլի միջոցով են արտայայտւում։

Մամուլը, այդ սրբազան զէնքը գործ դնել անձնական կրքերի եւ կուսակցական նեղ հաշիւների համար, պղտորելով միամիտ ընթերցողների միտքն ու հոգին, անբարոյականութիւն է։

Տեսնել ճշմարտութիւնը եւ փակել աչքերը լռել արդարութիւնը եւ խցել ականջները, մտաւոր կուրութեան նշան է։

Եկեղեցեաց Գուրգէն անունով մէկը իր «Դրօշակեաններու յիշատակարանից» վերնագրով յօդւածում Դրօշակի եւ իւր գործիչների վրայ ստեր ածելու համար, ի միջի այլոց մէջ է բերում չորս անձնաւորութիւնների անուններ, որոնց «գող, ստախօս, ցոփ եւ բարոյական արժանիքէ եւ ընտանեկան ազնիւ դաստիարակութենէ զուրկ է համարում։ Այս չորս անձնաւորութիւններից մէկին միայն լաւ ծանօթ լինելով Բարսեղ Մելիք Գրիգորեան—Ղարամէլիքին, կուզէի նրա մասին խօսել։ Թէեւ միւս անձնաւորութեանց մասին գրածին էլ չի կարելի հաւատ ընծայել, որովհետեւ ինչպէս «Հնչակ»ն էլ ցոյց է տալիս (Թ. 181) պարոն յօդւածագիրը առաջնակարգ ստախօսի ախտը վաղուց է ձեռք բերել։

Ահա թէ ինչ է ասում Եկեղեցեաց Գուրգէնը Ղարամելիքի մասին։ «Բարսեղ Մելիք Գրիգորեան (Ղարամելիք) Դաշնակցութեան ղեկավարներէն մին, Ս. գործի անունով հարիւրաւոր ոսկիներ գրպանելով Բեթերսպուրգէն Վիեննա. Վիեննայէն Ժընեւ կը վազվզէ, ասկէ զատ իրեն տարեկան մեծակ [illegible] մը սահմանուած ըլլալով իր ցոփ կեանքը կը շարունակէ, մէկ կողմէն [illegible] զինակելով, կիրքեր գրգռելով եւ ատելութիւն սերմանելով»։

Այս խօսքերի մէջ մի հատիկ ճշմարտութիւն գտնել չի կարելի. բաւական է միայն յիշել որ Ղարամելիքը իր գործունէութեան ժամանակ ոչ Վիեննա է եղել ոչ Ժընեւ, իսկ Պետերբուրգը իր կեանքում չի տեսել։ Սոսկալի զրպարտութիւն այնպիսի մի մարդու դէմ, որ իւր կեանքի ամենալաւ տարիները եւ իր երիտասարդական ամբողջ աշխոյժը զոհ է բերել յեղափոխական գործին եւ այն էլ այն ժամանակ, երբ դեռ հայկական յեղափոխութիւնը իւր սաղմի մէջ էր, երբ դեռ կուսակցութ

միանց գաղափարը չկար։ Իսկ 90ա-կան թւականներից սկսած իւր գա-ղափարներով Դաշնակցութեան հա-մամիտ լինելով, այդ խմբի մէջ է մնալ ու նոյն եռանդով ու հաւատար-մութեամբ իւր գործը շարունակել։ Նա անցել է այն բոլոր փորձութեանց բովով, ինչ որ մի ճշմարիտ յեղա-փոխականի արժանիքն է համարւում։ Նա այն սակաւաթիւ յեղափոխական-ներից մէկն եղել, որոնց խորին հա-մոզումն է, թէ երկրում գործելու համար, պէտք է երկիրն եւ ժողո-վրդին լաւ ուսումնասիրել եւ այդ նա գործնականապէս ապացուցել է։ Նա այն սակաւաթիւներից մէկն է (գուցէ եւ միակը) որ այնչափ առ-կուսութեամբ եւ համոզմամբ հետե-ւել եւ որոշ չափով իրականացրել է Դաշնակցութեան այն հիմնական գա-ղափարներից մէկը «թէ քրդերը չեն փոքր իսկական թշնամիները եւ թէ պէտք է աշխատել նոցա ներգործու-թիւնը չէզոքացնել Ծածկաստանում» իւր ձեռնարկութեանց մէջ նա եղել է միշտ զգոյշ, լուրջ եւ խոհեմ, այս բանի ամենափայլուն ապացոյցն է այն՝ որ նա Ենիզեցեայ Գուրգէնին ու նրա նմաններին երբէք գործ չէ վստահացել երբ իրեն են գիտել։

Այս բոլոր քաղաքական զրկանքնե-րից յետոյ, Ղարամելիքը վաստակել է նաեւ բազմաթիւ նիւթական զոհո-ղութիւններ. Նա ոչ միայն հեռու է եղել յափշտակող ոսկիներ եւ մեծ-կան գումարներ գրպանելուց, այլ իր գրեթէ ամբողջ հարստութիւնը սուրբ գործի համար է գործածել։ Այսպիսի մի զոհաբերութիւն երեւի Գուրգէնի ըմբռնողութիւն անհասկանալի է. ինչ-պէ՞ս միթէ՞ կարելի է անձնական հարստութիւնը ուրիշների համար ծախսել, ո՛չ, երեւի դա գողցած է, կամ գտնւած։

Այս բոլոր քաղաքական ու նիւթա-կան զոհաբերութիւններից յետոյ այսօր Ղարամէլիքը ժամանակից վաղ իւր մազերը ճերմակացրած ժամանա-կաւոր խոնջութիւն է տալիս իւր փշրւածի պէս քայքայւած անդամներին եւ երբեմն վարձ իւր գործունէութեան Գուրգէների գրւածներն է կարդում։ Ապերախտ աշխարհ. ապերախտ մարդիկ. որ ճրագը միշտ գրւանի տակ են պահում, առանց մտածելու որ ճրագը շարունակում է իւր լոյսը սփռել, կոյրերն են միայն որ չեն տեսնում։ Նրանք թէ Գուրգէնի նը-մանները փոխանակ անմիտ զրպար-տութիւններով զբաղւելու, Ղարամե-լիքի ճանապարհով ընթանային եւ նրա պէս միայն մի փոքրագոյն մասը անէին. այնժամանակ մենք եր-ջանիկ կը լինէինք։

Այս իմ խորին համոզմունքն է։

Խոց

25 յունվար Բերլին

Խ. Խ.—Դաշնակցական միւս գըր-ծիչներն էլ, որոնք նիւթ են դարձել այդ "զրոխի" Գուրգէնի յօշոտման-րին, նոյնքան զոհող ու բարձր են, եւ անձնւէր գաղափարական որինաների (?) են։ Գուրգէններին՝ Դաշնակ-ցական գործիչներին ըմբռնելու հա-մար դեռ շատ պէտք է բարոյապէս բարձրանալ, որը անկարելի է դրանց համար։

ՔԱՋ ԹՈՒԽՄԸ

Նւէր Վ. Ճայլին

(Պատկեր կ. Ողանիների աշխարհից)

Հազիւ ութ տարեկան լինէի. գտ-նւում էի ամարանոցում, որը տեղա-ւորված էր Փամբակ գետակի հովտի գեղածիծաղ եւ հրաշալի անկիւններից մէկում։

Մայիս ամիսն էր, բնութիւնը իր հարսնութեան ու պճնված վիճակում։ Կենսափառութիւնը եռ ու զեռում էր անշունչ եւ շնչաւոր էակների մէջ։ Ամեն բան կեանք էր շնչում ու մի նոր կեանք տալիս. անկարելի էր ե-րեւակայել որ այդ րոպէներում մահը կարող է գոյութիւն ունենալ։

Մեր ազգական մի երիտասարդի հետ առաւօտեան գնացինք նրանց պարտէզը, որը փռված է անտառա-պատ լեռան ծաղկազարդ փէշի վրա։ Պարտէզում գտնւում էին անթիւ ան-սահ պտղատու ծառեր գոյնզգոյն ու անուշաբոյր ծաղիկներով զարդարված. կար եւ մի մեղուանոց։ Մեղուանոցը գրաւեց իմ ուշադրութիւնը, ես կանգնեցի նրանից մի քիչ հեռու եւ սկսեցի գլուխ բրար անցած ու աղ-մկող այդ փոքրիկ միջատներին։ Ինձ հետաքրքրում էր եռուն Բաբե-լոնեան խառնակութիւնը մեղուների հասարակութեան մէջ։ Ես դեռ գա-ղափար չունէի մեղուական ընկերա-կան կազմակերպութեան վրա, ոչ գիտնորների, ոչ թագուհիների եւ ոչ ծծմակերների վրա. դրա համար էլ ինչքան զօր էի տալիս ուղեղիս, այ-նու ամենայնիւ չէի կարողանում հաս-կանալ աղմուկի պատճառը։ Ինձ հետ կանգնած էր եւ երիտասարդի սիրու-նիկ, սեւ, սպիտակ բծերով որսի շու-նը, Արաբկան. եւ աչքերը պլշած, բայց երբեմն անհանգստանալով դի-տում էր մեղուներին ու երբեմն մռ-մռում։

Այդ կենդանական վիճակից ինձ հա-նեց մօտիկում գտնվող պարտիզպանի խրճիթից դուրս եկող հաւի թուխսը, իր փոքրիկ ճուտերով։ Նա կչկչալով, ձագերը առջեւը արած, դուրս եկաւ ազատ օդ շնչելու։ Երբեմն ինքն էր առաջ ընկնում, այն ժամանակ ձագերը կարգը խանգարում էին, մի քանիսը ետ էին մնում, թնջկվում էին կա-նաչների մէջ, ու թուխսը ետ էր դառնում կչկչալով յանդիմանում ան-կարգներին, կրկին իրար սեղմում, խումբը կարգաւորում եւ իր առջեւը գցում։ Ես մեղուներին մոռացայ եւ թուխսին սկսեցի դիտել։ Արաբկան էլ կչկչոցը լսելով, ականջները խլշ-տացրեց, մուշտարու աչքով նայեց փոքրիկ թռչուններին. մի երկու ան-գամ ցնցվեց, աւելի բարձրաձայն մռմռաց, ու կարծես փորձվեց վրա ընկնելու, բայց վերջը կարծես զգա-լով որ նրանք էլ իրեն պէս մարդու հովանաւորութեան տակ են ապրում, ուրեմն համաքաղաքացի են, եւ չը պէտք է նրանց վնասել, ինքզինքը զսպեց ու շարունակեց միայն իր փայլուն աչքերով թուխսին եւ ձագե-րին հետեւել։

Թուխսը շարունակում էր խրճիթից հեռանալ։ Ես եւ Արաբկան հետեւում էինք նրան, մանաւանդ անհնազանդ, ըմբոստ, ու մօր հովանաւորու-թեան պէտքը արհամարող ձագերին։ Բայց յանկարծ թուխսը սկսեց աղմուկ բարձրացնել. ձագերին կրկին ի մի համախմբել. ու կատաղած նրանց շուրջը պտոյտ գալ։

Թուխսի խռովութիւնը այնքան մեծ էր, որ հասկացայ թէ նրա հետ մի արտակարգ բան է պատահում, վեր նայեցի. ջինջ օդից նետի նման վար էր սուրում մի խոշոր ցին, եւ ուղղակի թուխսի ու ձագերի վրա։ Վերջապէս արիւնարբու թռչունը հա-սաւ ու կտցից ծագերից մէկին, թուխսը կատաղած թռաւ ցինի վրա, իր կտուցը եւ ճանկերը խրեց նրա մսի մէջ ու կախ ընկաւ։ Մի ակն-թարթում սլացաւ Արաբկան եւ ցատ-կելով ցինի վրա նրա վիզը առաւ իր ատամների տակ։ Ցինը սկսեց մա-քառել. ձագին թողեց։ Ճանկերը եւ կտուցը խրեց Արաբկայի մսի մէջ, բայց ուշ էր։ Արաբկան նրան խեղ-դեց ու իր յաղթանակով վազեց ինձ մօտ եւ կարծես պլշանքով սատկած գիշատիչին ցոյց տւեց։

Թուխսը մի երախտագիտական ակ-նարկ նետելով ազատարար շան վրա, ու փետուրները կարգի բերելով հե-ռացաւ կուի վայրից։ Ես կրկին մօ-տեցայ մեղուանոցի մեղուներին դի-տելու։ Յոգնած եւ մի քանի տեղ վի-րաւորված ազատիչ Արաբկան գնաց եւ մի ստուերախիտ ծառի տակ պառ-կեց հանգստանալու, առանց վարձա-տրութեան ակնկալութեան...

Մի քանի րոպէից նկատեցի որ կր-կին թուխսը վերադարձաւ իր ձագե-րով եւ սկսեց սատկած ցինի արիւնը կոցել։ Ձագերն էլ մօրը հետեւեցին։ Նրանք թշնամու արիւնն էին խմում ինչպէս երեւում է...

Կենդանական աշխարհում տեղի ու-նեցած այս պայքարի բնորոշ դէպքը յիշւել է իմ մտքում, ու քանի մենք սկսել ենք պայքարել արիւն-ռուշտ թուրքերի հետ, ես միշտ ե-րեւակայում եմ,—երբ պէտք է գայ այն օրը որ հայը այս հաւի թուխսի չափ քաջութիւն եւ անձնազոհողու-թիւն ունենայ իր զաւակներին պաշտ-պանելու արիւնարբու թշնամու դէմ. եւ մեր պաշտպանութիւնը յանձնառած Եւրոպան Արաբկայի քաջասրտու-թիւնը. թող բայց վեհ ու անձ-նազոհ դարձած եւ մաքառող հայ ժո-ղովրդին պաշտպանելու համար։

ՎԱՐԴՈ

ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ԴԱՏԸ

Վերջապէս փետրվար 1ին, Սոֆիայի մէջ սկսաւ մեծագոյնագոյն պատական նախարարներուն դատը։ Պուլկար ժողովուրդը մեծ յուզումով կսպասէր այս օրը, ու որովհետեւ իր քսանեւհինգ տար-ւան քաղաքական ազատ կեան-քին մէջ առաջին անգամ ասանկ երեւոյթի մը հանդէպ կը գտնը-ուի։ Այսպիսի երեւոյթ մը հազ-ուադէպ է նոյն իսկ եւրոպական ժողովուրդներու մէջ որոնք վա-ղուց անտի անկախ են եւ սահմա-նադրական։

Մեղադրուող նախարարները են պ. պ. Իվանչօֆ, նախկին նա-խարարապետ, Ռատոսլավօֆ, ներ-քին գործոց նախարար եւ աղա-տական կուսակցութեան կուսակ-ցապետ, Թէնէֆ, ելեւմտից նա-խարար եւ Թոնչէֆ հաղորդակ-ցութեան ու շինութեանց։ Կը մեղադրուին սահմանադրութեան օրինաց դէմ մեղանչելու եւ ի-շխան իրենց տէրութեան շահե-րուն վնաս հասցնելուն մէջ։

Նախարարները դատող պետա-կան արտակարգ դատարանը կազ-մուած է բարձրագոյն վճռաբեկ ատեանի անդամներէն եւ բոլոր նահանգական դատարաններուն նախագահներէն վիճակով ընտ-րուած 13 հոգիներէ։

Ազգային ժողովին կողմէ նշա-նակուած են երկու մեղադրողներ։ Դատին կը մասնակցին 140 վկա-ներ։ Մեղադրուողները ունին քանի մը փաստաբաններ, Պուլ-կարիոյ նշանաւոր փաստաբան-ներէն։ Նախարարներուն դէմ բողոքած են եւ մասնաւոր մարդ մը, որ աքսորուած է պ. Ռատոս-լավօֆի հրամանով եւ 1100 ֆը-րանքի գումար մը կը պահանջէ իփոխարէն իրեն հասած վնա-սին եւ Սոֆիայի քաղաքապետու-թիւնը, որը 330.0 ֆրանք կը պահանջէ Ռատոսլավօֆին պատ-ճառով քաղաքին հասած վնասին փոխարէն։

Դատը սկսելէն եւ նախնական ձեւական հարցումներուն պատաս-խանելէն յետոյ պ. Ռատոսլա-վօֆ կը պահանջէ որ մասնաւոր մարդոց խնդիրները չը խառն-ուին պետական պահանջին. նոյ-նը կը պահանջեն եւ փաստաբան-ները։ Ըստ որոյ փաստաբաններէն մի քանին կառարկեն որ օրէն-քով միայն մէկ պետական մե-ղադրող պէտք է ըլլայ, եւ մե-ղադրողներէն մին արդէն երես-փոխան չըլլալով, իրաւունք չու-նի մեղադրողի պաշտօնը ստանձ-նել, եւ վերջապէս նախարարնե-րուն դատի տալու որոշումը օրի-նաց համաձայն իշխանէն վաւե-րացուած չէ, ուստի դատը ապօ-րինի է։

Արտակարգ դատարանը մե-ղադրեալներուն եւ փաստաբան-ներուն առարկութիւնները լսելէն յետոյ, արդէն ճաշի ժամանակ ալ ըլլալով, կը հեռանայ եւ ճա-շէն յետոյ կը յայտարարէ որ մասնաւոր խնդիրները, ինչպէս եւ Սոֆիայի քաղաքապետութեան պահանջի խնդիրի մասին համա-ձայն է մեղադրեալներուն հետ, զանոնք կը բացառէ, իսկ միւս պահանջներուն բաւարարութիւն չի տար եւ դատը պիտի շարու-նակուի։

Զը մոռնանք ըսել որ մեղադր-եալներուն փաստաբանները դա-տին ապօրինութեան մասին խօ-սած ատենին յայտարարած են որ իրենք այդ առարկութիւն-ներով ոչ թէ դատէն կը վախ-նան ու կուզեն որ դատը յետա-ձգուի. այլ պարտականութիւն

կղզան միայն սխալները մատնանիշ ընել։

Դատը կը տեսնուի «Սլավեանիսկա Պէսէտա» սրահին մէջ։ Նարակոզմ դատարանը ակնածանք կալդէ իր կարգ ու սարքով, բազմաթիւ դատաւորներով, ընտիր հասարակութենէ բակացած ունկնդիրներով և երեկի նախարար մեղադրեալներու ներկայութեամբ։

Կարգապահութիւնը կանոնաւոր է. և ամեն մարդ ուշի ուշով կը դիտէ մեղադրեալները, դատաւորները և փաստաբանները։

Ցմենքը վստահութիւնը ունին որ արտակարգ դատարանը անկողմնակալ որոշում մը պիտի տայ և մեծ հաւատք կայ որ մեղադրուող նախարարները արդար պիտի ճանչցուին։

Մենք պիտի աշխատինք «Նարոժումի» ընթերցողներուն օրը օրին ամփոփ տեղեկութիւններ տալ այս ուշագրաւ դատավարութեան մասին։

Ն.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Երկուշաբթի օր, Բարիզի մէջ մեծ ժողով մը տեղի ունեցեր է ի նպաստ Հայաստանի և Մակեդոնիայի. Տէսթրնէլիու նախագահութեամբ։ Ժողովին ներկայ գտնուեր են Պրէսանսէ, Ժորէս, Տէնի Գոշէն, Էմիէն, Անադոլ Ֆրանս և ուրիշներ։ Նախագահը՝ պ. Տէսթուրնէլ հաստատեր է քաղաքակրթուած ժողովուրդներուն միջամտութեան պահանջը հայկական և մակեդոնական խնդիրը լուծելու համար, և կարդացեր է զանազան կուսակցութիւններու պատկանող պետական մարդոց բազմաթիւ քաջալերական նամակները։ Ժողովը միաձայնութեամբ փափագ յայտներ է որ ֆրանսական կառավարութիւնը եռանդուն կերպով աշխատի վերջապէս Պերլինի դաշնագրութիւնը համաձայն 1895 մայիս 11 ի մէջ. մօրանտումի, իրագործուի և Թուրքիոյ մէջ վերջ տրուին մարդկութեան դէմ եղած սպանութեան փորձերուն։

— Օրման փաշան անցեալ կիրակի պալատ գացեր է Սուլթանի հրաւէրով։

Սուլթանը իր ցաւակցութիւնը յայտներ է վեղարաւոր փաշային կեանքին դէմ եղած փորձին համար։ Օրման փաշան շնորհակալ հայ ժողովրդին հաւատարմութիւնը, Սուլթանէն խնդրեր է որ մինչև օրս չը գործադրուած իրատէները գործադրուին։ Սուլթանը՝ խոստացեր է շատ շուտով մեծ վէզիրին անհրաժեշտ պատուէրները տալ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Անգլիա կը պնդէ որ Բ. Դուռը խիստ միջոցներ ձեռք առնէ կարմիր ծովին մէջ վխտացող ծովահէնները ջնջուին։

Այս օրերս կարմիր ծովի մէջ անգլիական նաւերը 60ի չափ ծովահէններ ձերբակալած են. Թուրք կառավարութիւնը կը պահանջէ զանոնք պատժելու համար։ Անգլիական դեսպանը պահանջեր է որ եմէն նոր զօրք չը ղրկուի քանի որ դեռ եմէնի և Ատէնի սահմանները որոշուած չեն։

Լօնտոնի Թուրք դեսպանը հրաման ստացած է անգլիական կառավարութեան յայտարարելու, որ Բարձրագոյն Դուռը Անգլիոյ բոլոր պահանջներուն բաւարարութիւն պիտի տայ, որովհետեւ Թուրքիա, մանաւանդ հիմա, շատ կը փափագի Անգլիոյ հետ ունեցած իր հին բարեկամութիւնը պահպանել։

— Իտալական թերթ մը կը հաղորդէ որ վերջերս ռուսական պալատի մէջ տեղի ունեցած պարահանդէսի միջոցին Ցարը Թուրք դեսպանի ներկայութեան, անգլիական, իտալական և գերմանական դեսպաններուն յայտարարած է «մեծ յոյս ունիմ Սուլթանի բարիկամքին վրայ, շատ կը մտածեմ Մակեդոնիայէն եկած նոր յուզիչ տեղեկութիւններու մասին, պէտք է որ Մակեդոնիոյ և Հին Սերպիոյ խնդիրն կարգադրուի։ Ես, իմ կառավարութիւնս, և իմ բարեկամ պետութիւններս կը փափագինք որ Մակեդոնիոյ մէջ խաղաղութիւնը և օրինաւորութիւնը վերահաստատուին, և շուտով այդ մտքով որոշում մը երեւան պիտի գայ»։

Թուրք դեսպանը կայծակնահարի պէս եղեր է Ցարին այդ խօսքերէն, փորձեր է պատասխանել, բայց Ցարը առանց ժամանակ տալու սկսեր է խօսիլ Իտալական դեսպանին հետ։

— Սուլթանը յունաց պատրիարքէն պահանջեր է որ ուղերձ մը տրուի եւրոպական պետութիւններուն յունաց ժողովրդի կողմէն յայտարարելով որ նորամոյծ բարենորոգումներէն շատ գոհ է Մակեդոնիոյ յոյն ժողովուրդը. պատրիարքը Սուլթանին այդ պահանջը սինոդին ներկայացուցեր է, իսկ վերջինս մերժեր է կատարել։

ՊՈՒԼԿԱՐԻԱ—ՄԱԿԵԴՈՆԻԱ

Ներքին գործոց նախարարի հրամանով Պուլկարիոյ մէջ գտնուած մակեդոնական յեղափոխական կազմակերպութեանց բոլոր պիւրօները գոցուեցան և բոլոր կարեւոր գործիչները ձերբակալուելով աքսորուեցան երկրին ներսերը, ուր ստիկանական հսկողութեան տակ պիտի գտնուին։

Այդ առթիւ հարցապնդում եղաւ երեսփոխանական ժողովի մէջ։ Նախարարապետ պ. Դանէֆ պատասխաներ է որ Պուլկարիոյ խաղաղութիւնը պահպանելու համար ինք ամեն ճիգ պիտի թափէ Մակեդոնացիներու գործունէութիւնը կասեցնել։

— Սոֆիայի և զանազան քաղաքներու մէջ բազմամարդ միթինգներ տեղի ունեցեր են որոնց մէջ դատապարտեր են կառավարութեան բռնած ընթացքը դէպի մակեդոնական կազմակերպութիւնը և գործիչները։

— Ռուսական դեսպանատունը Սոֆիա վերադարձեր է և ուղղակի պալատ գացեր է։

—o—

ՎԷՆԷՑՈՒԷԼԱ

Ուաշինգթընէն կը հեռագրեն Վէնէցուէլայի և Երեք պետութեանց ընդհարումին կարգադրութեան արձանագրութիւնները ստորագրուեր են։

— Վէնէցուէլայի ծովափերու պաշարումը արդէն վերցուած է։

ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ ԾՐԱԳԻՐԸ

Սոֆիայի «Վէչ. Լոշթա» թերթը հետեւեալ ծրագիրը հրատարակած է, որուն ճշմարտութիւնը կը հաւաստիացնէ։

ա) Մինչեւ բարենորոգմանց ներմուծման վերջանալը Բ. Դուռը, պետութեանց հաւանութեամբ իշխանութեանց վրայ վերահսկիչ մը պիտի նշանակէ, անձ մը, ոչ պալատին մօտիկ մարդոցմէ, որպէսզի պալատին ազդեցութեան տակ չիյնայ իր պաշտօնավարութեան միջոցին։

բ) Այդ վերահսկիչը Սուլթանի հպատակ քրիստոնեայ մը պիտի ըլլայ։

գ) Մակեդոնիան երեք նահանգներու պիտի վերածուի. առանց արմատական փոփոխութեան ենթարկելու ներկայ վիլայէթներու վարչական, դատական և զինուորական կազմը։

դ) Այդ նահանգներու վալիները թրքահպատակ պիտի ըլլան, Սուլթանէն պիտի նշանակուին, առանց դաւանանքի և ազգութեան խտրութեան։

ե) Վարչական զանազան ճիւղերու մէջ մասնագէտ եւրոպացիներ պիտի նշանակուին, որոնք կրնան և օտարահպատակ ըլլալ։

զ) Այդ մասնագէտները մասնաւորապէս պիտի զբաղին նահանգներուն ելեմուտքը կարգաւորելով։

Նկատ. Ծրագրի մէջ ընդունուած է Սուլթանի գերիշխանութիւնը և իբրև գործադրող ուժ, Թրքական ոստիկանութիւնը։

ԱԶԴ

Ցառաջիկայ փետրուար 3 հինգշաբթի գիշեր «Սանդրալոյ» սրահին մէջ ի նպաստ ազգային երկսեռ վարժարանաց տեղի պիտի ունենայ շքեղ պարահանդէս մը (դիմակաւոր և անդիմակ)։

Հոգաբարձութիւնս քաջայոյս է որ դպրոցասէր ազգայինք իրենց պատուաբեր ներկայութեամբը պիտի հաճին պատուել սոյն երեկոյթը՝ որուն արդիւնքը կը յատկանայ բազմաթիւ աղքատ և որբ մանկանց կրթութեան։

Հոգաբարձութիւն Ազգ. երկսեռ վարժարանաց

4 փետրուար 1903
Վան

(ԿՆԻՓ)

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի եւ դեկտեմբերի (902) հրապարակ նետուած, առանց թուահամարի Հնչակներու չարունակունակութիւնը, եղող 903 Յունուարի «Հնչակ»ն ալ, որ առաջիններուն պէս Ա. գոլպարս, 21. Վորշրօն fous, Պիֆիան ու Լօնտօն Ս. Ր. (Էնկլանտ) հասցէն կը կրէ սոսկալի կեղծիք մըն է յօրինուած՝ ժողովրդին միամիտ սրտերը խաբելու համար Շահրիման, Արզուեան, Զիթճեան եւ ընկ. կողմէ որոնք արտաքսուած են Հնչակեան կուսակցութենէն։

Կզգուշացնենք հայ հասարակութիւնը այդ զառնազլուխներուն անսանձ շահատակութիւններէն։

Ի դիմաց Վառնայի Հնչ. Մասնաճիւղին։

Ատենադպիր Ատենապետ
Հ. Զուրեն Արիզ Ղազարեանց

4/17 փետր. 1903

Ծանօթ.— Բուն «Հնչակ»ի հասցէն է՝ Մ. Պելլարդ, 85 Թաֆնիլ Բիւ, 85 Լօնտօն Ս. Ր. Անկլէտեր

Եւ մօտ ատենէն լոյս պիտի տեսնէ

Նոյն

ՀԱՅ ՄՍԱ. ԱՇԱՌԱՆՈՑ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԹԱՆԵԱՆԻ

Պալըզ բազար անկիւնի խանութը. թիւ 7

Կը ծախենք կովի, քըվըրճըքի միս, գեր և մասնաւորապէս լաւ տեղեր արածուած կենդանիներ կը մորթենք և շարունակ թարմ միս պատրաստ կը գտնուի մեր խանութը ամէն ժամանակ. Գին դիւրամատչելի և ուղիղ կշիռ։

5

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность» Варна